

ՊԱՏՄԱԿԱՆ

ԺԵՆԵՎԱՎՐՀՈՒԹԻՒՆ

ՅԵԳԻԴՏՈՒՄ.

Տ կարգս Սռաջնորդաց Հայոց Խզիպատուի, որ առաջին է ժամանակաւ քանի զամենայն եղեալսն յարձանագիրս, յիշաւակի առաջինն ի նոցանէ Գրիգոր վարդապետ ոմն. որ ի թուականին Հայոց Ո՞ՌԵ (1606) գրէ արձանագիր ի վերայ օրինակի հրովարտակին, որոյ նախագաղափարն տուեալ է յանուն ընդհանուր ազգին Հայոց իբրև զիր ազատութեան ի Մահմետէ, յետ երկուց ամաց ընտրութեան նորա ի մարդարեութիւն բովանդակ Մահմետական ազգին, վասն ազատութեան ազգի մերոյ առի համարձակ պաշտել գրիգիստոնէութիւն և աներկիւղ ունելոյ զեկեղեցի ընդ ամենայն աեղիս :

Յիշեալ Գրիգոր վարդապետ ի վերայ նոյն օրինակի հրովարտակին վասն պահանութեան այնորիկ ի ծոց եկեղեցւոյ որբոյն Աարգսի՝ արձանագրեալ է նզով այսպիսի. “ Եյս ազատութեան թուղթ ով յեկեղեցւոյ սուրբ Աարգսի հանէ, և ի տան պահէ, կամ ծախտէ, կամ ուրիշ մարդոյ տայ, նզովեալ լիցի յերից սուրբ Ժողովոցն, և մեր մեղացն պարտական լիցի: Ես նուաստ Գրիգոր վարդապետս հաստատագրով նզովեցի զհանողն ի դրանէ որբոյս, և օրհնեցի զինամով պահողսն. ի թուին Ո՞ՌԵ ”:

Յարձանագրութենէ աստի երեի, զի նախ քանի զթուականն Ո՞ՌԵ Յորում

ամի դնի շինութիւն սուրբ Աարգիս եկեղեցւոյն, եղեալ է զոյն խոկ եկեղեցի. ուստի շինութիւնն յայդմ ամի համարել պարտ է նորոգութիւն և ոչ նորոգ շինութիւն. վասն զի ընդ մեջ երկուց թուականոցդ ժողովին ամք ընդամենն 143, յորում սուրբ Աարգիս լեալ է ի շինութեան. այլ թէ ի նոյն ժամանակէ մինչեւ ցշինութիւնն զի՞նչ ինչ փոփոխութիւն կրեալ իցէ Խկեղեցին, և ոյր անուամբ կառավարեալ, ոչ ուստիքէ յայտնի երեի. զի Սռաջնորդք, զորս կարգաւ ունիմք յիշատակիւ ի կարգին, չեն յառաջ քան զառումն Խզիպտոսի ի Գաղղիացւոց, զի առաջինն ի նոցանէ Յարութիւն վարդապետ, որ երեի միարան լեալ Հոգետանն յաւուրս շինութեան այնորիկ ի Տփիսիսեցի Խղիսարէթ խաթունէն, եղեալ է Սռաջնորդ յաւուրս գալստեան Բոնապարտին յիշիպտոս ի յամի Տեառն 1797. յորում կառուցեալ է և յիշատակեալդ Հոգետանն արգեամբք Տփիսիսեցի խաթունին, ուր յիշատակի և նոյն Յարութիւնն վարդապետ ընդ ումեմն Պաղար վարդապետի: Այլ նախ քան զայս չիք յիշատակութիւն Սռաջնորդաց յարձանագիրսն մինչեւ ցԳրիգոր վարդապետ, ցյիշատակեալ թուականն Ո՞ՌԵ՝ յամ Տեառն 1606, որպէս եղաք ի վերոյտ Տսկ յաղագս գաղափարի հրովարտակին Մահմետի, այսպէս ունի աւանդութիւն ազգս մեր աստ ի Գահիրէ, զի զայս գաղափար գենպեան Տաճկաց Բառարայու հանեալ է անդ յիսկական բնագրէ հրովարտակին Մահմետի, և հաստատեալ կնքով իւրով տուեալ է Հայոց գնելով ի լուսանցմն այնորիկ զինիք իւր

այլ թէ յորում ժամանակի զբեալ զայն, ոչ ոք ցարդ ի տաճկաց կարաց իմանալ զայն կամ ընթեռնուլ վասն կարի այլաձեւ լինելոյ զբոցն և հնութեան արաբացի բարբառոյն:

Եյս ինչ յայտնի է, զի Տաճիկը առին զբարայ նախ քան զամո 300. ուստի հաւասարի է, թէ յետ առման այնորիկ տուեալ են զայն Հայոց տեղոյն յազաւառութիւն և անդր եղելոցն Հայոց. իսկ յետ ժամանակաց հասեալ իցէ այն գաղտնաբար ընդ ձեռն գաղթականացն մերոց տոտ յԵղիպտոս, այլ թէ ոյր ձեռամբ, այն ևս անյայտ:

Եյսու երեխ, թէև Հայք եղեալքն այժմ յԵղիպտոս, գաղթեալ են յառաջադրոյն ի Բարարայու, և զայն զիր ածեալ այսր ընդ իւրեանու:

“Եմին քան զտիրապետութիւն Կապօւէնի ի վերայ Եղիպտոսի, տիրէին այսմ աշխարհի Վեօլամանք (Պամելուքք) առացեալ բգեշխք՝ տաճկական իշխանութեամբ, որոց առնլով զնոյն յՕսմանիան գրանէ յաջորդէին միմեանցի նմին իշխանութեան:

Առքա՝ Վեօլամանք էին քըլիսառնեալք և Վլացիք ազգաւ, որք գերեալք ի Կառկասային կողմանց, յԱփիսազաց և ի հաւրաւային ափանց Պանտոսի և ի Վլաստանէ ի ձեռն տաճկաց, ածէին ի Կոստանդնուպոլիս, ի Բարելոն (Բաղդատ) և անախ այսր յԵղիպտոս. յորոց ի ձեռն ընկալեալ զՊահմականութիւն, ժողովին հարսանութիւն մեծ ի շռայլութենէ տէրանց իւրեանց ըստ տաճկական մոլեկան բարուց. որովք և ազատ լինէին ի գերութիւնէ. և հասեալք յիշխանութիւն բարձի

եւ աւագութեան, փոխանորդէին յաթոռ իշխանութեան երկրին, որոց և զօրացեալ այսու ի նմին ժամանակի, զերկիրն ամենայն կալեալ էին ի ձեռս սկզբութեան անուամբ, թէև զիշխանութիւն յՕսմանցւոց անտի առնուեին, այլ յազգէ նոցին ոչ ելանէր ոք յայս յաջորդական իշխանութիւն Եղիպտոսի, և կամ այլազգ ոք յափշտակել իշխանէր զայն:

Իսոցանէ էր և ոմն Ճեպէճի - պաշի անուն Վուստաֆայ պէյ հայազգի տաճկացեալ. որոյ քոյրն Եղիսարէթ անուն Տփիսիսեցի՝ եկեալ յԱրուսազէմ, և լուեալ զտեղի եղբօր իւրոյ, ցանկացեալ տեսանել զնա, որ էր յԱրդիպտոս, զայտատ. ուր և անյօյս իւալ ընդ գարձ եղբօր իւրոյ, մնայ աստ, մինչև ցմահիւր ծածուկ պահպանութեամբ ի նմանէ. ուստի և այս կին Եղիսարէթ Տփիսիսեցի շինէ ի յիշտակ հոգւոյ իւրոյ դհոգեառուն առաջին (գուցէ արդեամբք եղբօր իւրոյ) և զառանիճն վասն կարգաւորաց և պանդիտականց Հայոց որ յարեելից հնոյ եկեղեցւոյն սուրբ Արքունի ի թուականի Հայոց ՈՒՄԽ. Օ. (1757) յաւուրս Կապօլէոնի մեծի, որպէս տեսանի յարձանագրի Հռագետանս, ի Ճակատ դրան սառնձին ի սըրահի այնորիկ. որոց և ստորագրութիւնքըն ի կարգս Եկեղեցեացն:

Ի աիրել անդ Կապօլէոնի պետութեանն Եղիպտոսի յամին 1798 ի 1 Յուլիսի, էր աստ յԵղիպտոս յազգէ մերմէ 50—60 տուն բնակութեան եկք ըստ մասին ի Կոստանդնուպոլայ:

Յետ այսորիկ Յակոբ վարդապետ ոմն յանուն Երուսաղէմի նուիրակ գնացեալ ի Հնդիկս և անախ գարձ արարեալ յԵղ-

զիսպառս որպէս աւանդեն, շինէ զերիս սեւ նեակս ի վերնայարկի սուրբ Ասրդիս եկեղեցւոյն Եռաջնորդարան անուամբ ի պէտքս կարդաւորաց. յորում և վերոյիշեալն խսթուն անցուցանելով զաւուրս, վախճանի անդէն և թաղի ի գերեզմանոցին չայոց, որ ի պարսպի սուրբ Մինաս եկեղեցւոյն:

Յառաջին ժամանակս և ընդհանրապէս նախ քան զտիրապետութիւն Մահմատ Ելի փաշային ի վերայ Եղիպտոսի գրեթէ յաւուրս շարժման Գաղղիացւոց ընդդէմ երկրիս, և առանձինն ցամս ժամանակաց Եւէնիչերաց, ազդ Քրիստոնէից յԱղիպտոս՝ ունեին զմեծ նեղութիւն, և հալածանս և մահ կրէին յԵւէնիչերաց անտի ի մասին քրիստոնէական կրօնից, և էին ի քաղաքի սոս ի Գահիրէ իրրե ի բանտի. զի ի միջավայրի քաղաքին ամփոփեալքն հազիւգտանէին զաղատութիւն ելից արտաքս ընդ տունն մինչ ի շուկայն. վասն զի ի փողոցս ինչ՝ յորս պակասէր բնակութիւն քրիստոնէից, յանցանելնոցա ընդ այն ըստ դիսպաց, յարձակէին ի վերայ նոցա Եւէնիչերիք, և սրախողիսող առնէին առ տեղեաւն. և չեր ոք վրէժին զիր արեանն հեղոց, և ոչ ոք իշխէր միսել ձեռն ի մարդասպանս անդր, և ոչ ոք ևս հարցանէր. զի արիւն քրիստոնէից զին էր ի ժամանակին զրեթէ իւրաքանչիւր բնակութեանց:

Եյնքան էր այսօրինակ երկիւղ մարդասպանութեան երկրիս, մինչ զի իւրաքանչիւր քաղաքացի քրիստոնեայ ոչ ուներ վասահութիւն հեռանեալ ի կրպակաց, կամ յայնոցիկ փողոցաց՝ յորս քրիստոնէից էին կրպակք. և շատք ևս

որպէս ասացաք, երկնչէին արտաքս զնալառ ահի բռնութեան. իսկ զերգաստանաց գրեթէ չեր լեալ օրէն արտաքս ընդ դուռըն ելանելոյ, զի մի յափշտակեսցին ի բռնարարողաց. որոց ի ձեռս ածեալ մանուկ ոք կամ կին՝ իսկոյն ի տաճկութիւն ստիպէին. և ընդ չառնուլ նոցա, ի պէսպէս անառակութիւնս շուայտէին ընդ նոսա և տանջէին հեթանոսաբար. զի ամենէքին և զօրն և զօրապետն բարբարոսք էին, մանաւանդ թէ և քաղաքականն իսկ կառավարութիւն բարբարոսական էր ի ժամանակին:

Եյսօրինակ գործք էր աշխարհակալաց երկրիս, և այս ձեւ քաղաքական կառավարութեան իշխողացն. յորմէ առ ահի քրիստոնեայք ամփոփէին զեկեղեցի իւրեանց, և արտաքուստ անհետ առնէին զնե նոցա, ի ներքուստ կառուցանելով նոցա ի տունս տունս, որոց վերնայարկս յարդարէին ի տուն բնակութեան, և ի ներքնայարկսն եկեղեցի, զի մի ծանիցին զայնս տաճիկք տեղի և տուն աղօթից. որպէս զի մի յաւարհականիցին. թողղայս, և մեռելոց անդամ առ երկիւղի և առ բանութեան զտունս իւրեանց առնէին գերեզմանս. զի ընդ արտաքս տանել զայնս ի հանդասարան. ընաւ իսկ չեր կարելի վասն նախատանացս և վասն անտանելի չարիս գործելոյ առ ննջեցեալն, որպէս և մինչեւ ցայժմ ի բազում տունս Պափտեաց գոն հանգստարանք մեռելոց՝ վկայք բարբարոսութեան ժամանակին:

Աշմօրանք ահարեկութեան քրիստոնէից ի ժամանակէն տակաւին երեխն և պահին առ նոսա, ուր ուրիշ քաղաքականացեալք են նոքին յԱղիպտոս ասա, և

յընդհանուր Տաճկաստան առաւել յԵս-
սիական մասին, յորս ահարկութիւնն
դեռ անշեց գողով ի խուժան ռամպին՝ և
զերեալ ազատութիւն կրօնից քրիստո-
նեայ ազանց՝ ցայժմ ևս ոչ կարեն հա-
մարձակ պայծառացուցանել զքրիստո-
նէական հանդիսավեհութիւն եկեղեցւոյ
իւրեանց, այլ յառաջոյ դրանց նոցին է
զի կառուցեալ են տախտակամած դրու-
նըս երկրորդականս, և է զի պարիսպ
շրջապատ ածեալ զնոքօք, զի մի արտա-
քուստ հայել ունիցի տաճիկ ռամպին ի
ներքս, կամ զանապատեհս ինչ ի ներքս
անդր եկեղեցւոյն գործիցէ:

Ի ժամանակս անդ Քեօլամանաց և
յիշսանութեան Եբինիւրաց Առաջնորդք
ոմանք յիշատակին ազգիս՝ աստ յԵղիպ-
տոս, բայց ոչ զգործոց նոցին և զժա-
մանակաց Առաջնորդութեանցն տան մեզ
հաւաստիս արձանագիրք Եկեղեցեացն
յիշատակարանաց՝ և ոչ բերանացի զրոյց
պատմութեանց ծերոց ժողովրդեան մերոյ,
միայն զանուանս նոցին հանաք որչափ և
գտաք Առաջնորդարանիս մերում աստ
ի Գահիրէ, ի թղթոց և ի կոնդակաց ժո-
ղովրաբութեան և նուիրակութեան ա-
թոռոյն Երուսաղեմի, յորս բաց ի ժողո-
վարաբութեան դրամոց յաղգես՝ չիք այլ
պատմարանական զիտելի արժանաւորք
ծանօթութեան:

Ասկայն այն ամենայն բարբարոսական
գործք և բանութիւն քաղաքական իշխա-
նութեանն շիջաւ բոլորովին յաւուրց իշ-
խանութեան Մահմատ Ալի փաշային.
որոյ այր աշխարհաշէն գողով, և կամելով
ի կրթութիւն մուծանել զաշխարհ իւր,
ինաջինց արար զբոնութիւնն, մեղմեաց

զխիստ ատելութիւն աաճկական կրօնի
առ քրիստոնէիցս ազդ. ետ ազատութիւն
քրիստոնէական կրօնից ընդ ամենայն Ե-
ղիպտոս, երաց և Ճանապարհ Հաղորդակ-
ցութեան ընդ ամենայն Եւրոպա, օրինա-
կաքն բարեկարգեալ զաշխարհ իւր և նո-
ցին քաղաքականութեամբք պայծառա-
ցուցեալ զժողովուրդ զեկն և զբնիկն,
որով և մարդավարեալ ռամպին՝ մահին
ի հնազանդութիւն լծոյ օրինաց իշխա-
նութեանն:

Եյսոքիւք օրինօք եդ նա ի կարգի ըզ-
դատարանսն իւր ըստ շաւզաց կառավա-
րութեան Եւրոպական ազդին, որով արդ
հետ զհեաէ յառաջանայ ողջոյն Եղիպ-
տոս ի նմանութիւն լուսաւոր ազանց, և
արդ բազումք զնեն յԵղիպտոս տուն
ընակութեան. զորոց բազմաթերթ հատո-
րովք զրեալ են Եւրոպացի Ճանապար-
հորդք:

Օայժմեան ազատութիւն քրիստոնէից
յԵղիպտոս՝ հաւասար տեսի մարդկային
և կրօնական ազատութեան Եւրոպացւոց:
Այս ցոյցք լուսաւոր կառավարութեան և
մարդասէր օրինաց, յորոց որպէս յառա-
ջըն զուրկ էր, Եղիպտոս զարդիս նոքօք
պայծառանայ:

Դ.

Որ ինչ անցք են պատմութեան Ազգի
մեր աստ յԵղիպտոս, ոչ ի վեր յառա-
ջանան քան զթուական Փրկչին 1824,
այն է յաւուրս առաջնորդութեան Աի-
րակոս Եպիսկոպոսի, որ եզե յետոյ պատ-
րիարդ Երուսաղեմի:

Յեկեղեցական յիշատակարանացն չիք
մեղ քաղել ծիշդ ժամանակագրական տե-
ղեկութիւնս վասն ժամանակին ընդմշ-

անցելոյ Գրիգոր վարդապետի առաջնութիւն ՅՈՒՐԱՁՆՈՐԴաց մինչ ց յիշատակեալդ Եւ պիսկոպոս, բաց ի սակաւուց ինչ պիտելոց մերում ձեռնարկութեան, զորս և ի յիշատակարանացն ըստ կարգի առնեմք ցանկագիր, բայց և ո՞չ ի նոսին գտանեմք զշարունակ յաջորդութիւն ՅՈՒՐԱՁՆՈՐԴացն ի սուրբ Պարգիս եկեղեցւոջ, կամ նախ քան զայն ի քաղաքիս, ուստի և զայն ամենայն յակամայից թողլով յանձանօթս, դիմեմք ի դործս ժամանակակից ՅՈՒՐԱՁՆՈՐԴաց և առ մեօքն եղելոց ազգիս Հայոց:

Յիշատակեալդ Կիրակոս կարգի ՅՈՒՐԱՁՆՈՐԴ Հայոց Եղիսպառոսի յամին՝ որպէս ասացաւ 1824 ընդ իւր բերելով զԳարերիէլ վարդապետ փոխանորդ ինքեան: Սա վարէ ՅՈՒՐԱՁՆՈՐԴՈՒԹԻՒՆՆ զամա մետասան մինչեւ ցամ Տեառն 1835. իսկ յորժամ ել նա յայսմ պաշտօնէ, ընտրեցաւ փոխանակ Եղիսկոպոսին յաջորդ նորա Գարբիէլ վարդապետ ի նոյն ամի:

Յաւուրս ՅՈՒՐԱՁՆՈՐԴՈՒԹԵԱՆ Կիրակոսի եղեալ են Հայք տեղւոյս ի մեծի յաջորդութեան յարքունի դործս բգեշխին, յորում և յիշխանութիւն հաւսեալք, որպէս է Պօղոս պէյ Խւսուֆեան, որոյ դործք աշխարհածանօթ է յԵւրոպա:

Ի մեծամեծ դործս բգեշխին երկրիս՝ էր սա հաւատարիմ դրան արքունի. յորոց ի շնորհս և Հայք վայելեալք են զաւպահովութիւն և զաղատութիւն կենաց և կայից, և բազումը ևս ի վաճառականութիւն շահավաճառ լեալ:

Պակայն այս այր Պօղոս պէյ որքան ինելի էր ի դործս վասն այլոց, վասն ազգին իւրոյ չկարաց առնել երեկոի ինչ

ի մշանջենաւոր բարօրութիւն Եղիսպառոսին Հայոց:

Իսկ ի կարգի վաճառականաց երեկոի եղեն ի յետին ժամանակս Եղիսպառութեան Ալէքսան աղայ և Միքայէլ Եղայ Խաչութեան, որք յառաջադէմ դտան վասն օդաի ազգիս ի պաշտօնի լոմայափոխութեան, որոց յիշատակ են նուիրեալ յանուն աղգին ինչ եկեղեցական տունք, ի կարգի պատմութեանս եղեալ ստորե, պտուղ բարեպաշտութեան սոցա ի փառա հայրենի եկեղեցւոյ ի պանդուխա երկրիս՝ ի վարձ փոխարինի բարեաց հատուցման:

Ի սկզբան առաջնորդութեան Գարերիէլ վարդապետի, որ կալաւ զառաջնորդութիւն որպէս ասացաք՝ զինի Արքակոս Եղիսկոպոսի յամին 1835, ազգ մեր յԵւգիպտոս և առաւել աստ ի Գահիրէ՝ ազգային սեպհականութեամբք հանդիսացաւ ի մէջ ազգաց Տաճկաց, Երաբացւոց և Պատեաց տեղւոյս, և ծանուցաւ յաչս Եւրոպացւոց և միւս քրիստոնէից՝ ազգ հին և քրիստոնէական կրօնիւք բարեպաշտեալք հաւասար քրիստոնեայ ազանց, որպէս կինն ի սկզբանէ քրիստոնէութեան բւրեանց յընդհանուր պետութեան Օսմանցւոց առ ահի Ճնշեալ ի քրիստոնէութեան վիճակի ի բանութենէ մահմետական կրօնից:

Քանիզի որպէս գրեալ եմք ի սառարդութիւնս եկեղեցեացն, ցայն վայր ազգ մեր ո՞չ ունէր զեկեղեցի առանձին, այլ զի ազգ Պատեաց սեպհական ազգ են Եղիսպառոսի և սեպհական բնակիչք երկրին, նոքա միայն ունէին զեկեղեցի ըստ ձեւյ տան՝ տեղի աղօթից Եստուածպաշտութեան, յորժամ Երաբացիք զօրաւ

ցեալք առին յԵզիպտացւոց զողջոյն Ավրիկէ:

Եյլ զի և յԵրաբացւոց առին Տաճիկք, յայն սակս և չէր օրէն յԵզիպտասոս ի նուցին պետութեան միւս քրիստոնէից ունել զեկեղեցի որպէս և Հայոց. զի որք էինն ի Դ փտեաց կամ ի Յունաց ի վաղ ժամանակաց՝ էին յաւուրց անտի Եզիպտական պետութեանն:

Աւստի նորոգ Առաջնորդն յիշատակիալ Գարբիկէլ վարդապետ զայս նեղութիւն ազգին և զանվայելըութիւն սուրբ Արքիս եկեղեցւոյն, զհնութիւն նորա և զանձկութիւն ևս և զմթազգածն լինել նորա ի խարխուլ միջնայարկի տանն, յուրում և Պ փտեացն աղօթարան ընդ նեղ և ընդ խոտոր ձանապարհ, յորում և ժողովուրդն ոչ բաւէր մեկնել, բարեդէպ միջոց վարկաւ և զամենայն ջան ի մէջ առեալ քաջալերեալ ինքնին՝ քաջալերէ և զիշխանս ևս ընդ իւր ըստ ներկայ ազատութեան քրիստոնէութեան՝ դտանել և զեկեղեցւոյ ազգին ազատութիւն, առնուլ հրաման շինութեան նորոյ և առանձին ազգային եկեղեցւոյ, որ տաճկական օրինոք փակեալ էր ընդ ամենայն աշխարհն հակառակ կրօնից համարեալ զայն:

Եյսու բարենպատակ խորհրդով զամենայն եկամուտա կալուածոց Երուսաղէմի արգելուառ իւր, զորս ինքն ամի ամի առաքէր յաթոռն. և զամենայն նուէր և տուրս բարեպաշտութեան ժողովրդոց կալեալ ի ձեռին, գնէ նորոք տունս ինչ Հրէից և Պ փտեաց յառաջոյ Առաջնորդարանին նորոյ՝ ի հարաւոյ սուրբ Արքիս եկեղեցւոյն յընդարձակ տեղւոջ, ուր է այժմ եկեղեցին, և քակէ զայնս խապառ

յարդարել տեղի հիմնարկութեան Տաճարին:

Յետ որոյ ապա խնդիր արկանէ առկուսակալ բգեշխն՝ տալ հրաման ի կառուցանել զԵկեղեցի. բայց ըստ որում չէ օրէն և ցարդ ի Տաճկաստան կառուցանել քրիստոնէից նորոգ եկեղեցի, պատճառ այսպիսի ի մէջ բերէ իրը թէ յառաջագոյն ի տեղւոջն յայնմիկ եղեալ է եկեղեցի Հայոց և սինովկայ Հրէից, զորս արդ կամին միացուցանել. սակս որոյ և յառաջադոյն ի դատաւորէն (զայմաղամ) առեալ էին ժողովուրդք մեր գիր հաստատութեան:

Ելանէ ի բգեշխէն հրովարտակ շինութեան Եկեղեցւոյն. իսկ իրըև շինութիւնն բարձրանայ ի կէս կատարման, մեկուսացեալ գոլով բգեշխին անտի՝ ժամանակին Խլեմայքն կոչեցեալ Տաճիկք օրինապահք մահմէտական կրօնից՝ բողոք բառնան միահազոյն առ դատաստանապետ քաղաքին արգելուլ զշինութիւն եկեղեցւոյն մերոյ, որոյ շինութիւն որպէս ասացաք՝ արգելեալ է մահմէտական օրինօք ըստ սովորութեան երկրին, մասնաւանդ զի միւս քրիստոնեայք ևս չունեին ցայն վայր եկեղեցի յԵզիպտասու

Զայս և որ զբացակայութիւն բգեշխին առիթ ի ձեռին առեալ փոխանորդ նորա, հրաման առաքէ առ Գարբիկէլ վարդապետ դադարեցուցանել զշինութիւն եկեղեցւոյն, միայն եթէ ունին կարութիւն, ասէ, նորոգեսցեն զշինն, զի չիք հրաման շինութեան նորոյ եկեղեցւոյ:

Իբրև դարձ առնէ բգեշխն, վերստին մատուցանեն Հայք ինդիր վասն կատար-

ման շինութեան եկեղեցւոյն արգելեալն ցայն վայր, և վերստին առեալ հրաման շինութեան, հասուցանեն զեկեղեցին ի կատար:

Բայց զի շուտափսյթ եղև շինութիւնն առ երկիւղի, իրրե կատարելագործեալն էր եկեղեցին, անկաւ տանիք նորա և քաշիցան որմունքն ի տեղիս տեղիս. ըստ որոյ և սակաւ ինչ ցած քան զառաջինն կանգնեցին վերստին առաւելութեամբ պարտուց, ընդ որով տակաւին ձնշէր այս նորակառոյց եկեղեցի և յաւուրս մեր յամին 1853 մինչ էաք ի Գաահիրէ:

Յամենայնի յայսոսիկ ձեռնարկութեան թէ ի բանս արքունի և թէ ի շինութեան եկեղեցւոյն գործակից և միանգամայն վերակացուք էին Երգոյ Ելքսան Եղիազարեան և Միքոյել Խուճատրեան յառաջաւոր իշխանք ժողովրդեանն, որոց և մեծարդոյ գոլով յաջս բգեշխին ըստ հաւատարմութեանց իւրեանց առ դորածավարս և առ դպրաւորս իշխանութեանն, ունեին համարումն մեծ. որով և յաւարտ հասուցին զշինութիւն եկեղեցւոյն, և պատճառ եղեն այլոց ևս քրիստոնէից ունել առանձին եկեղեցի ի Գաահիրէ. ուր ոչ գոյր և ոչ մի բաց յիշելոցն յառաջին ժամանակաց որպէս ասացաք:

Քանիզի յորժամ երկըորդ աղերս մատօնցաւ յազգէ մերմէ առ բգեշխն սակս արդելլոյ Խւլեմանացն զշինութիւն եկեղեցւոյս մերոյ, հրօվարաակ եշան նա ինքն բգեշխն ընդ ամենայն Եղիազարս, զի ոչ միայն Ճայք աղատ եղիցին կառուցանել զեկեղեցիս, այլ և ամենայն Քրիստոնեայք ուր ուրեք գտանիցին ի ներքոյ իշխանութեան իւրոյ:

Եւ աշխ ըստ հրամանիս ըստ այսմիկ այժմեան Քրիստոնեայք ունին առ մեօք առանձին առանձին եկեղեցիս Ճայք, Յոյնք, Լատինք, Գաաղղիացիք, Ենդղիացիք, Վահուական և հերձուածք սոցա առանձինն, մինչև ցտասն ազգ աղատութեան ընդարձակեալ զրագուկ Քրիստոնէութեան, աղատաբար ևս ունին զԱստուածապաշտութիւն ընդ ամենայն Եղիազարս, և Քրիստոնէական կրօնիւք Ճայքին ի մէջ մահմէտական կրօնից:

Եզդ մեր աստ եկեալ են յամենայն կողմանց Եսիոյ, և բնակառեալ վաճառաշահութեամբ ի Գաահիրէ և յԽղէքսանդրիա, ոչ սակաւք ի նոցանէ խառնակեալ ընդ Վահուական ազգ, փեսայանալով ընդ նոսա յազգութիւնտ Բազումք ևս գնեալ նաժիշտ Եփրիկեցի, զորս վաճառեն սօվորաբար, անպսակ գնոսառնին ի կին, և թողուն ի նոցանէ ժամանել, ոմանիք ևս երկար պահելով, մլրտեն գնոսաքրիստոնեայս, և զծնեալս ի նոցանէ համարեն օրինաւոր ժառանգ կայից և գոյից իւրեանց: Եյսպէս ազգ մեր ի մերում ժամանեակի, այսպէս իմա և զմիւս քըլուտոնէից:

Ուսիս այսորին և եկեղեցական իշխանութիւնն մեր աստ անոււամբ և եթ կայ, այլ արդեամբք զրեթէ անշետ եղեալ. ի սոցա ոմանիք ոչ հաղորդին խորհրդոյ սըրոյ Պատարագին՝ սակս անդ մահմէտականացն Եփրիկեցւոց խառն գոլոյ, և Եպիսկոպոսն ոչ կարէ իշխել նոցին: Ուսկաւք են որք ունին կին օրինաւոր ամուսնութեամբ, առ որս կատարի եկեղեցականն խորհուրդ Պատարագի, մլրտութեան

և այլն: Աերազինք աստանօր ամենեքին զրկթէ ի վարձու ունին տուն բնակութեան, յառաջաւորք ումանք ի ժամանակին շինեն սեպհական տունն և կալուածաւ:

Ի մերում ժամանակի յաճախեն յեղիպտոս Օմիւռնացի մերայինք, և ամենեքին զրկթէ մասնեն ի ծառայութիւն քաղաքական իշխանութեան, ումանք ի զրագրութիւն դատաստանական տեղեաց յԵրաբացի բարբառ, այլք յայսպիսի պաշտօն վերաբերեալս բղեշին և նորին քաղաքական կառավարութեանն: Առկաւք են յաջողակիք ի վաճառականութեան, տռաւելքան զայս չիք այլ գործք մերազնէից, զի որք են մնացեալ մասն ժողովրդոց՝ ենումանք որք առնեն լումայափոխութիւն, են՝ որք արծաթագործք են, այլք ի ծառայութիւնս յառաջաւորաց, սրճարանաց և պանդոկաց դտանին, և սոքա են յաղքատացն կարգի զաւուրն հաղիւ հայթայթեալ պարէն:

Օերկուս իշխանս ի ժամանակի ունիմք յիշել զԳեօրգ Ուափայելեան կոստանդնուպօլիսիցի և զԱրապիւս Տէր Վալլատեան Վանեցի, որոց թող դայլ և այլ բարեպաշտական գործս Ըստուածահաջոյս և օդտակարս ազգին, առաջինն շիշնեցի ի յիշատակ զայժմեան երկյարկեան Եռաջնորդարանն, և երկրորդն մեծ և բարեպաշտութեամբ կառուցանէր ի մերում ժամանակի զպրոց հոյակալ վասն ազգիս մանկանց լուսուորութեան:

(Ե յէ ու բայց)

ԱԲԷ, ԱՐԵՎԱԴՐԱԿԱՐԱՐ

ՅՈՒՅԱԿԻ (*) ԶԵՌԱՋՐԵԼՈՅՆ
և ՍԻՄԵՕՆ ԿԱԹՈՒՂԴԻԿՈՍԻ.

Երդ զինի օծման խրոյ Արբազան Աշխը մեր՝ զորս ձեռնազրեաց, թէ զեպիսկոպոսս, թէ դՔահանաց և թէ զայլ Ըստիձանաւորս, ահա ի ներքոյ ցուցա-

(*) Այս ցուցակը Հայրապետական թղթոց մէջէն դանելով՝ արժանի համարեցանք ի հրատարակութիւն:

Այս ցուցակի առաջին երկու և նետեւեալ ուսմանոր հատուածքն գրուած էին:

Դար է ստիւ ու Տէր:

Ա Զինե չարիք յաճախեցան, վերք իմ կրկին նորոգեցան. ոչ անցեալ անցքն ոչ բաւեցան, վիրաց վերայ վերք կուտեցան. միմէ իմ կար վիճաց իցէ, զի թշնամին միշտ զիս խոցէ. զիս խոցէ,

Երկին երկնէր և չեծեծէր վասն իմ խղճացացաւ ծնանէր. ոչ, իսկ թշնամին ներանիւթէր, զի հնարիքն գուն զործէր. միմէ իմ կար վիմ:

Ծուրջ զինե լորեցոց ծովակի առ ի յառնել յարայատակ. ոչ. տապալել զիս հողոյ քատակի իմ վերայ բանաց զրոշակ. միմէ իմ կար:

Ազատին զիս ի թշնամցու ով ամենափրկիւ Յիառաւ. ոչ. արդ աչք զերցու և՛ ի քեզ կոյտ զետքն սիաց յցժ հիքցու յցժ հիքցու. միմէ իմ կար վիճաց :

Ա. առաջ մարդու է Արդ է բ:

Վարանեալ անձն իմ զեղերի. մաս բանս միշն հզօրի. սիրով իմով եղէ զերի. աւաղ սէրն իմ

Խակ ցուցակին վերնապիրը ըստ այսի էր:

Ի ԱՄ ԺԲ Շատուցն և յԱռելէ ամայ իստահ. է Հնագերուրդի իւրաքի յինանցն, որ եր ուն երւան ուրբան իսաւն, Հաքեար Հայրն մեր Ավետին Արբականն օծառ շնորհանուր կանոնակի ու մինացն Հոյոց: